

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



ՏԱՐԵԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

2021 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՌՈՏ ԱՄՓՈՓԱԳԻՐ	3
ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ	3
ՄԱՍ 1. 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ.....	10
ՄԱՍ 2. ՌԻՍԿԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ	12
ՄԱՍ 3. ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԻԴԻՏԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	18
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	26

ՀԱՄԱՌՈՏ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Սույն տարեկան հաղորդումը ներկայացվում է՝ ի կատարումն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 198-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, ինչպես նաև «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի ա) ենթակետի և 28-րդ հոդվածի պահանջների: Այն պատրաստվել է՝ առաջնորդվելով Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության (INTOSAI) ստանդարտներով՝ ISSAI-ներով:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԵՐԱՑ

Հաշվեքննիչ պալատը 2021 թվականի գործունեության ծրագրի շրջանակներում իրականացրել է 94 հաշվեքննություն, որից 72-ը՝ Հաշվեքննիչ պալատի 2021 թվականի գործունեության ծրագրի առաջին մասի շրջանակներում (2021 թվականի պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննություններ), 19-ը՝ գործունեության ծրագրի երկրորդ մասի՝ ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանությամբ հաստատված հաշվեքննությունների շրջանակներում, իսկ 3-ը՝ գործունեության ծրագրի երրորդ մասի՝ միջազգային պայմանագրերով նախատեսված համատեղ միջոցառումների շրջանակներում:

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏԱՄԲ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով Հաշվեքննիչ պալատը 2021 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ ամենամյա եզրակացությունը կազմելու նպատակով իրականացրել է թվով 72 հաշվեքննություն 18 բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչի կողմից իրականացվող բյուջետային ծրագրերի նկատմամբ:

Քանի որ, ՀՀ Սահմանադրության և «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի համաձայն, ՀՀ պետական բյուջեի կատարման նկատմամբ հաշվեքննությունների արդյունքներն ամփոփող հաշվետու տարվա եզրակացությունը, որպես ինքնուրույն փաստաթուղթ, ներկայացվում է ՀՀ Ազգային ժողովին և հրապարակվում է Հաշվեքննիչ պալատի www.armsai.am կայքում առանձին ժամանակացույցով, սույն տարեկան հաղորդումը այն չի ներառում: Միաժամանակ, «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով՝ սույն տարեկան հաղորդման Մաս 1-ում ներառված է 2020 թվականի պետական բյուջեի կատարողականի հաշվեքննության վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն:

ՌԻՍԿԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվեքննիչ պալատի 2021 թվականի գործունեության ծրագրի երկրորդ մասի շրջանակներում (ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանությամբ) ծրագրով նախատեսված 30 հաշվեքննությունից ավարտվել է 19-ը, իսկ մնացած 11-ը՝ դեռևս շարունակվում է, ուստի «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 4-րդ մասի հիմքով 2021 թվականի գործունեության ծրագրից 11 ծրագրային կետ տեղափոխվել է 2022 թվականի գործունեության տարեկան ծրագիր (տեղափոխված ծրագրային կետերի ցանկը՝ Հավելված 1.-ում):

Հաշվեքննության շրջանակ: Հաշվետու տարում Հաշվեքննիչ պալատի հաշվեքննության շրջանակը ներառել է օրինականության, տնտեսման, ինչպես նաև ծախսային և նպատակային արդյունավետության առումով ռիսկային և առավել նշանակալի ոլորտներ՝ հաշվի առնելով Հաշվեքննիչ պալատի ռեսուրսները:

Հրապարակված հաշվեքննություններ: Իրականացված 19 հաշվեքննության արդյունքներով Հաշվեքննիչ պալատի կողմից հաստատված ընթացիկ եզրակացությունները օրենսդրությամբ սահմանված ժամկետում ներկայացվել են Ազգային ժողով, Կառավարություն և համապատասխան հաշվեքննության օբյեկտներին, որից 17-ը, «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հրապարակվել են Հաշվեքննիչ պալատի պաշտոնական www.armsai.am և ՀՀ հրապարակային ծանուցումների www.azdarar.am ինտերնետային կայքերում (հրապարակված հաշվեքննությունների ամփոփ արդյունքները ներկայացված են սույն հաղորդման Մաս 2-ում):

Պետական գաղտնիք պարունակող հաշվեքննություններ: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է պետական գաղտնիք պարունակող հաշվեքննություն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունում ՀՀ տարածքում տեղակայված ապաստարանների և հակաճառագայթային թաքստոցների պահպանության նկատմամբ, ինչպես նաև ՀՀ պաշտպանության նախարարության գնումների գործընթացի նկատմամբ, որոնց արդյունքները գաղտնիության հիմքով չեն հրապարակվում: Նշված հաշվեքննությունների արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացություններին հասանելիությունը կարգավորվում է «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի շրջանակներում:

ՀՀ Ազգային ժողովի հետ համագործակցություն: Հաշվեքննիչ պալատի հաշվեքննությունների արդյունքները որոշակի պարբերականությամբ քննարկման առարկա են դառնում ՀՀ Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային

հարցերի մշտական հանձնաժողովում: Հաշվետու ժամանակահատվածում Հաշվեքննիչ պալատի մի շարք հաշվեքննությունների արդյունքներ քննարկվել են ՀՀ Ազգային ժողովի համապատասխան մշտական հանձնաժողովներում: Ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովն ակտիվորեն հետևել է Հաշվեքննիչ պալատի իրավական բարելավման միջոցառումներին:

Իրավապահ մարմինների հետ համագործակցություն: Հաշվետու ժամանակահատվածում «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի հիմքով՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում (2 հաշվեքննություններով), ՀՀ պաշտպանության նախարարությունում /գաղտնի/, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեում, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգում գործող ՊՈԱԿ-ներում, «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ում իրականացված հաշվեքննությունների շրջանակներում Հաշվեքննիչ պալատի որոշմամբ հաշվեքննության արդյունքներն ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազություն:

Հաշվետու տարում ՀՀ գլխավոր դատախազություն ուղարկված նյութերի շրջանակներում առանձին 4 ուղղություններով հարուցվել է քրեական գործ, կատարվում է նախաքննություն, մյուս ուղղություններով ուսումնասիրությունները շարունակվում են: Նախորդ տարիների հաշվեքննություններով հաշվետու տարում հարուցվել են ևս 4 քրեական գործեր, որոնց մասով պետությանը պատճառված վնասի չափը կազմում է մոտ 381,564 հազ. դրամ, կատարվում է նախաքննություն:

Իրավապահ մարմինների հետ հաշվետու տարվա համագործակցության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է հաղորդման Հավելված 2.-ում:

Հաշվեքննության կարծիքներ և եզրակացություններ: Հաշվետու ժամանակահատվածում կիրառվել են հաշվեքննության «ֆինանսական», «համապատասխանության» և «կատարողականի» տեսակները՝ տարբեր համակցություններով:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ¹

Ֆինանսական և համապատասխանության	3
Համապատասխանության և կատարողականի	1
Համապատասխանության	2

¹ Վիճակագրության մեջ ներառված չէ պետական գաղտնիք պարունակող հաշվեքննությունների փվայլները

Հաշվեքննության առաջադրանքներն իրականացնելիս հաշվեքննողները կիրառել են հաշվեքննության համար նախատեսված բոլոր ընթացակարգերը:

Ֆինանսական և համապատասխանության հաշվեքննությունների արդյունքներով Հաշվեքննիչ պալատը ներկայացնում է հաշվեքննության կարծիքների հետևյալ տեսակները.

- դրական եզրահանգում, եթե ստացվել է բավարար տեղեկատվություն հաշվեքննություն իրականացնելու համար, և էական խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել,
- ոչ լիարժեք եզրահանգում, եթե հայտնաբերվել են էական խեղաթյուրումներ, դրանց հետևանքները համատարած չեն, և հաշվետվություններն էականորեն խեղաթյուրված են, կամ հայտնաբերվել են էական խեղաթյուրումներ, դրանց հետևանքները համատարած չեն, և անհնար է ստանալ բավարար տեղեկատվություն հաշվեքննություն իրականացնելու համար,
- բացասական եզրահանգում, եթե հայտնաբերվել են էական խեղաթյուրումներ, դրանց հետևանքները համատարած են, և հաշվետվություններն էականորեն խեղաթյուրված են,
- հրաժարում եզրահանգում ներկայացնելուց, եթե հայտնաբերվել են էական խեղաթյուրումներ, դրանց հետևանքները համատարած են, և անհնար է ստանալ բավարար տեղեկատվություն հաշվեքննություն իրականացնելու համար:

Հաշվետու ժամանակահատվածում տրամադրված հաշվեքննության կարծիքների վիճակագրությունը հետևյալն է.

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Դրական եզրահանգում	2
Ոչ լիարժեք եզրահանգում	4
Բացասական եզրահանգում	1
Հրաժարում եզրահանգում ներկայացնելուց	0

Հաշվեքննիչ պալատը կատարողականի հաշվեքննություններով ներկայացնում է կատարողականի հաշվեքննության սկզբունքների պահպանման վերաբերյալ հաշվետվություններ: Կատարողականի հաշվեքննության սկզբունքներն են՝

- տնտեսումը, որով գնահատվում է, թե ինչքանով են նվազագույնի հասցվել նախատեսված (ձեռք բերվող) ռեսուրսներին ուղղված ծախսերը՝ սահմանված ժամկետի, որակի, քանակի, ծավալի պահպանմամբ և համարժեք հատուցմամբ.
- նպատակային արդյունավետությունը (արդյունավետություն), որով գնահատվում են սահմանված նպատակների իրականացումը և պլանավորված արդյունքների ստացումը.
- ծախսային արդյունավետությունը (օգտավետություն), որով գնահատվում է նախատեսված ռեսուրսների օգտագործմամբ համապատասխան որակով, քանակով և ժամկետում առավելագույն արդյունքների ստացումը:

2021 թվականի կատարողականի հաշվեքննության հաշվետվություններում ներկայացված կատարողականի հաշվեքննության սկզբունքների չպահպանման դեպքերն ամփոփ ներկայացված են ստորև.

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԶՊԱՀՊԱՆՄԱՆ ԴԵՊԵՐ

<i>Տնտեսման</i>	6
<i>Օգտավետության</i>	9
<i>Արդյունավետության</i>	10

Հաշվեքննությամբ ներկայացված առաջարկություններ: Բացահայտված անհամապատասխանությունների, խեղաթյուրումների և ռիսկեր պարունակող դեպքերի վերացման և կանխարգելման, ինչպես նաև գործընթացների արդյունավետության բարձրացման համար ՀՀ կառավարություն, հաշվեքննության և ստուգման օբյեկտներ, ինչպես նաև շահագրգիռ այլ մարմիններ ներկայացվել է ընդհանուր թվով 114 առաջարկություն, որը բնութագրական հատկանիշներով կարելի է բաժանել երեք տեսակի՝ համակարգին միտված, արդյունքին միտված և խնդրին միտված:

Համակարգին միտված առաջարկությունները նպատակ են հետապնդում բարելավելու կառավարման, ֆինանսական, իրավական համակարգերի գործունեության արդյունավետության բարձրացումը: Հաշվեքննիչ պալատի կողմից 2021 թվականի տարեկան ծրագրով իրականացված հաշվեքննությունների արդյունքում ներկայացվել է համակարգին միտված թվով 47 առաջարկություն:

Արդյունքին միտված առաջարկությունները նպատակ են հետապնդում բարելավելու ծրագրերը և ծառայությունները նպատակներին և ակնկալվող արդյունքներին հասնելու համար: Հաշվեքննիչ պալատի կողմից 2021 թվականի տարեկան ծրագրով իրականացված հաշվեքննությունների արդյունքում ներկայացվել է արդյունքին միտված 23 առաջարկություն:

Խնդիրների բացահայտմանը և լուծմանը միտված առաջարկությունների նպատակը հաշվեքննության արդյունքում բացահայտված անհամապատասխանությունների և խեղաթյուրումների վերացումն է կամ շտկումը: Հաշվեքննիչ պալատի նույն ժամանակահատվածում ներկայացվել է խնդիրներին միտված թվով 44 առաջարկություն:

Հաշվեքննության գործիքակազմ: Տարեկան հաղորդման մեջ ներկայացված բոլոր հաշվեքննությունների ընթացիկ եզրակացությունները կազմվել են՝ հիմք ընդունելով հաշվեքննության ընթացքում հաշվեքննողների կողմից կազմված հաշվեքննության (ստուգման) արդյունքների վերաբերյալ արձանագրությունները: Դրանք, համաձայն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի, ամբողջությամբ ներկայացվել են հաշվեքննության (ստուգման) օբյեկտների ղեկավարներին: Վերջիններիս կողմից ներկայացվել են առարկություններ և բացատրություններ: Առարկությունները որոշ դեպքերում իրենց բնույթով եղել են մեկնաբանություններ և բացատրություններ արձանագրված անհամապատասխանությունների և խեղաթյուրումների վերաբերյալ: Հաշվեքննիչ պալատի կողմից ընդունված առարկությունները հաշվի են առնվել ընթացիկ եզրակացությունների մշակման գործընթացում:

Հաշվեքննողների գործողությունները հաշվեքննության (ստուգման) օբյեկտների կողմից չեն բողոքարկվել: Հաշվեքննության ընթացքում հաշվեքննողները ղեկավարվել են հաշվեքննության իրականացման համար «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, միաժամանակ, կիրառելով Բարձրագույն հաշվեքննիչ մարմինների միջազգային ստանդարտներով նախատեսված հաշվեքննության գիտելիքներ: Հաշվեքննության ողջ գործընթացը, համաձայն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի պահանջների, հաշվեքննողների կողմից փաստաթղթավորվել է: Հաշվեքննության արդյունքները ձեռք են բերվել անաչառ և համակողմանի տեղեկատվության և փաստերի հիման վրա: Տրված բոլոր գնահատականները հիմնված են պատշաճ ապացույցների վրա: Հաշվեքննիչ պալատն իր գործունեության ընթացքում հետևել է օրենքով սահմանված գործունեության սկզբունքներին: Հաշվեքննիչ պալատի ընթացիկ եզրակացությունները և դրանց հիման վրա ձևավորված սույն հաղորդումը հաշվեքննությունների արդյունքներով բացահայտված անհամապատասխանությունների և խեղաթյուրումների վերաբերյալ որևէ որակում,

ինչպես նաև դրանց հետևանքների առնչությամբ որևէ կանխատեսում չեն պարունակում:

ՄԱՍ 1. 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2021 թվականին Հաշվեքննիչ պալատը հաշվեքննել է 2020 թվականի պետական բյուջեի կատարումը՝ պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման ֆինանսական և համապատասխանության հաշվեքննությունների իրականացման ճանապարհով: Հաշվեքննությունների արդյունքների հիման վրա Հաշվեքննիչ պալատը պատրաստել է 2020 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացություն՝ տալով հաշվեքննության կարծիք:


«Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ» ՀՀ հաշվեքննիչ պալատի եզրակացությունը հաստատվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021 թվականի մայիսի 27-ի թիվ 168-Ա որոշմամբ: Առաջին անգամ Հաշվեքննիչ պալատը եզրակացությունը մշակել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված մեխանիզմով՝ հիմնվելով եռամսյակային հաշվեքննությունների արդյունքների վրա: Մասնավորապես, 2020թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացության կազմման նպատակով, Հաշվեքննիչ պալատն իրականացրել է թվով 65 հաշվեքննություն 17 գերատեսչությունում: Հաշվեքննությունների արդյունքներն ամփոփված են ընթացիկ եզրակացություններում, որոնք օրենքով սահմանված կարգով ներկայացվել են ՀՀ Ազգային ժողովին, ՀՀ կառավարությանը, հաշվեքննության օբյեկտներին, ինչպես նաև հրապարակվել Հաշվեքննիչ պալատի պաշտոնական կայքում (բացառությամբ օրենքով սահմանված գաղտնիք հանդիսացող տեղեկություններ պարունակող 8 ընթացիկ եզրակացությունների):

Վերոնշյալ 17 գերատեսչություններում հաշվեքննությունների արդյունքում 12-ում արձանագրվել են 171 անհամապատասխանություններ: Միևնույն ժամանակ, արձանագրվել է 42 խեղաթյուրում թվով 5 գերատեսչությունում, որի ընդհանուր գումարը կազմել է 801,223.53 հազ. դրամ կամ հաշվեքննված գերատեսչությունների փաստացի տարեկան ծախսի 0.05%-ը:

Արձանագրված անհամապատասխանությունների և խեղաթյուրումների վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է 2020թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունում, ինչպես նաև երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննությունների ընթացիկ եզրակացություններում, որոնք հրապարակված են Հաշվեքննիչ պալատի պաշտոնական կայքում՝ բացառությամբ օրենքով սահմանված գաղտնիք պարունակող ընթացիկ եզրակացությունների: Եզրակացությամբ ներկայացվել են նաև մի շարք առաջարկություններ:

Հաշվեքննիչ պալատի կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացրել ՀՀ 2020թ. պետական բյուջեի մուտքերի

ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեությունը: Ըստ այդմ՝ Հաշվեքննիչ պալատը ՀՀ 2020թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ արտահայտել է **դրական եզրահանգում:**

Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ ՀՀ հաշվեքննիչ պալատի եզրակացություն	Հղում
	

ՄԱՍ 2. ՌԻՍԿԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննիչ պալատի 2021 թվականի գործունեության ծրագրի 2-րդ մասով իրականացված հաշվեքննությունների բոլոր մանրամասները ներկայացված են Հաշվեքննիչ պալատի պաշտոնական կայքում հրապարակված ընթացիկ եզրակացություններում: Սույն մասում արտացոլված է հաշվեքննությունների հիմնական արդյունքներից օրինակներ, իսկ ընթացիկ եզրակացությունների վերաբերյալ համառոտ ամփոփագրերը ներկայացված են Հավելված 3-ում:

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

1. Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայության կողմից կենսաթոշակառուների ցանկերի ձևավորման, կենսաթոշակների նշանակման, կենսաթոշակների վճարման իրականացման նկատմամբ կատարողականի հաշվեքննությամբ արձանագրվել է.

Նպատակային արդյունավետության սկզբունքի չպահպանման օրինակ

➤ Կենսաթոշակ նշանակելու համար աշխատանքային ստաժը հաշվարկելու գործող կանոնների համաձայն՝ կենսաթոշակի չափը հաշվարկելիս (վերահաշվարկելիս) աշխատանքային ստաժի հանրագումարի մեջ մինչև 180 օր ժամանակահատվածը չի հաշվառվում, իսկ դրանից ավելի ժամանակահատվածը հաշվառվում է՝ որպես մեկ տարվա ստաժ: Աշխատանքային ստաժի հաշվառման մեջ հաշվի չի առնվում փաստացի աշխատանքային ստաժը (ամիսներով և օրերով):

Ծախսային արդյունավետության սկզբունքի չպահպանման օրինակ

➤ Կենսաթոշակի մեկ վճարման նպատակով «Հայփոստ» ՓԲԸ-ին վճարվել է 386.9 ՀՀ դրամ, իսկ առևտրային բանկերին՝ 30 դրամ, որի արդյունքում Հայփոստ» ՓԲԸ-ի միջոցով վճարումների իրականացման գործընթացը ապահովելու նպատակով վճարվել է 1,185,469.4 հազ. դրամով ավելի գումար, մինչդեռ միայն 2019 թվականի ընթացքում առևտրային բանկերի միջոցով բաշխվել է 8,357,852.78 հազ. դրամով ավելի գումար, քան «Հայփոստ»-ի միջոցով²:

2. Առողջապահության նախարարության (այսուհետ՝ ԱՆ) կողմից նոր կորոնավիրուսային համավարակով (covid-19) պայմանավորված բյուջետային

² Հաշվարկը չի ներառում «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից ուժային կառույցների շահառուների համար իրականացված վճարումները

ծախսերի իրականացման նկատմամբ կատարողականի հաշվեքննությամբ արձանագրվել է.

Նպատակային արդյունավետության սկզբունքի չպահպանման օրինակ

➤ 2020թ. ԱՆ-ը չի ունեցել ռազմավարական գործողությունների և համաճարակների կառավարման պլան, ինչպես նաև չի ունեցել արտակարգ իրավիճակներում ծավալվող միջոցառումների ծրագիր: Չի իրականացվել հիվանդության կանխարգելման՝ համաճարակի առանձնահատկությունները հաշվի առնող ռազմավարական գործողությունների պլանավորման կամ դրան համարժեք աշխատանք:

➤ 1,300-ից ավելի դեպքերով ընդամենը 26 մլն դրամ արժեքով համակարգչային տոմոգրաֆիայի հայտերը համակարգ մուտքագրվել է՝ առանց դեպքի կողմ նշելու, ինչը հնարավորություն չի տվել նույնականացնելու՝ արդյոք տոմոգրաֆիա անցած բոլոր պացիենտներն են եղել Նոր կորոնավիրուսային հիվանդության պացիենտներ: Արձանագրվել են նաև դեպքեր, երբ իրականացված հետազոտությունը «ԱՐՄԵԴ» համակարգ մուտքագրվել է մեկից ավելի անգամ, և դրա դիմաց կատարել է բազմակի վճարում:

➤ Հիվանդության կանխարգելման ու բուժման նպատակով հատկացված 3,396,874.9 հազ. դրամ միջոցներն օգտագործվել են ԱՆ-ի ու նրա ենթակայության բժշկական կենտրոններին (այսուհետ՝ ԲԿ), ՊՈԱԿ-ներին, ՓԲԸ-ներին աշխատավարձ ու պարգևավճար վճարելու, այդ կազմակերպություններում շինարարություն իրականացնելու, դրանց նյութատեխնիկական բազան համալրելու նպատակով:

Ծախսային արդյունավետության սկզբունքի չպահպանման օրինակ

➤ Վերապրոֆիլավորված թվով 3 ԲԿ-ների կողմից ԱՆ ներկայացված փաստացի կատարված աշխատանքի վարձատրության ծախսերն ավելի քիչ են եղել, քան՝ այդ նպատակով ԱՆ կողմից կատարված փոխհատուցումը, որի հետևանքով կատարվել է 152,169.3 հազ. դրամով ավելի վճարում:

3. Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ ԷՆ) կողմից նոր կորոնավիրուսային համավարակով (covid-19) պայմանավորված բյուջետային ծախսերի իրականացման նկատմամբ կատարողականի հաշվեքննությամբ արձանագրվել է.

Նպատակային արդյունավետության սկզբունքի չպահպանման օրինակ

➤ ԱՆ-ից ստացված մեկուսացված անձանց քանակի և ԷՆ-ի կողմից հարկային հաշիվներով վճարված սննդի և հյուրանոցային ծառայություններ ստացող անձանց քանակի միջև արձանագրվել են 187,934.3 հազ. դրամի չափով 10,225 հատ հյուրանոցային ծառայությունների և 23,385 հատ սննդի

ծառայությունների շեղումներ: Այսինքն՝ ԷՆ-ն վճարել է հյուրանոցային և սննդի ծառայությունների դիմաց ավելի շատ, քան ԱՆ-ի տվյալների համաձայն, տվյալ մեկուսացման վայրում մեկուսացված անձինք են եղել:

➤ ԷՆ-ի կողմից ֆինանսավորվել են նաև բուժանձնակազմի և կորոնավիրուսային հիվանդությամբ ախտորոշված պացիենտների կեցության ծախսերը՝ 2,659,481.5 հազ. դրամի չափով: Վերոնշյալ հանգամանքով պայմանավորված՝ ԷՆ-ի 2020թ. ֆինանսական հաշվետվությունում առկա է եղել 2,659,481.5 հազ. դրամի չափով ներկայացման խեղաթյուրում:

Ծախսային արդյունավետության սկզբունքի չպահպանման օրինակ

➤ 27.03.2020-31.05.2020թթ. ընկած ժամանակահատվածում ԷՆ-ն մեկուսացման գործընթացն իրականացրել է հյուրանոցներն ամբողջությամբ վարձակալելով՝ առանց հաշվի առնելու, թե որքան է եղել մեկուսացման իրական կարիքը և մեկուսացված անձանց փաստացի թվաքանակը: Այդ եղանակով, ԷՆ-ն հյուրանոցային ծառայություններ մատուցած կազմակերպություններին է վճարել 906,703.6 հազ. դրամ գումար, այդ թվում՝ վճարելով ազատ մնացած սենյակների դիմաց:

Տնտեսման սկզբունքի չպահպանման օրինակ

➤ Մեկուսացված անձանց սննդի ապահովման համար ԷՆ-ի կողմից մատակարարներին վճարված նախաճաշի գները տատանվել են 500-ից 1800 դրամի միջակայքում, ճաշի գները՝ 1000-ից 3000 դրամի, իսկ ընթրիքի գները՝ 720-ից 2000 դրամի: Իրականացվել է նախաճաշից ավելի քան 100,000 հատով և ընթրիքից ավելի քան 50,000 հատով ավելի սննդի տրամադրում, որի անհրաժեշտությունը հիմնավորող որևէ պարզաբանում ԷՆ-ն չի ներկայացրել:

4. Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտի (այսուհետ՝ ՀՀՀՀՍ) ներդրման գործընթացի նկատմամբ ՀՀ ֆինանսների նախարարությունում իրականացված կատարողականի հաշվեքննությամբ արձանագրվել է.

Նպատակային արդյունավետության սկզբունքի չպահպանման օրինակ

➤ ՀՀՀՀՍ եռամսյակային (ՀՀ՝ որպես մեկ միասնական միավոր, վերահսկող կազմակերպություններ, հանրային հատվածի առանձին կազմակերպություններ) ներդրման գործընթացը 31.12.2020 թվականի դրությամբ ամբողջությամբ ավարտված չի եղել:

➤ 2017 թվականից մինչև 2021 թվականի մարտի 28-ը վերահսկող կազմակերպությունների կողմից «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով

նախատեսված համախմբված ֆինանսական հաշվետվությունները չեն պատրաստվել և չեն ներկայացվել:

➤ ՀՀ ֆինանսների նախարարությունը, որպես լիազոր մարմին, 2019 թվականի հաշվետու ժամանակահատվածի համար մեկ միասնական միավորի ֆինանսական հաշվետվություններ չի կազմել և չի հրապարակել, ավելին՝ մինչև 2021 թվականի մարտի 28-ը ՀՀ ֆինանսների նախարարությունը՝ ՀՀՀՀՍ ներդրման գործընթացի մշտադիտարկման, ինչպես նաև մեթոդական աջակցության տրամադրման համար օրենքով սահմանված իրավասություններ չի ունեցել:

5. Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի կողմից պետական գույքի կառավարման հետ կապված հարաբերությունների իրականացման կազմակերպված գործընթացի նկատմամբ կատարողականի հաշվեքննությամբ արձանագրվել է.

Նպատակային արդյունավետության սկզբունքի չպահպանման օրինակ

➤ Պետական գույքի կառավարման ծրագրով նախատեսվել է 2018-2020թթ. օտարել 41 անվանում անշարժ գույք, սակայն, նշված ժամանակահատվածում օտարվել է 63 անվանում կամ օտարվել է ծրագրում չընդգրկված 22 անվանում անշարժ գույք:

➤ 9,562.8քմ մակերեսով շենք շինությունը և 12,510քմ հողամասը օտարվել է գնահատված շուկայական արժեքից 492,244.00 հազ.դրամ պակաս գնով: Վաճառքի գինը 37,4%-ով գնահատված արժեքից նվազեցնելը բավարար իրավական կամ տնտեսական հիմնավորվածություն չունի, ընդամենը բավարարվել է ընկերության կողմից գրությամբ ներկայացված խնդրանքը:

➤ «Առողջ ապագա բժշկական կենտրոն» ՍՊԸ-ի կողմից ուղղակի վաճառքի ձևով «Դիլիջան» մանկական հակատուբերկուլյոզային առողջարան» ՓԲԸ-ի պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը մասնավորեցվել է՝ 134,420.40 հազ. դրամով «Առողջ ապագա բժշկական կենտրոն» ՍՊԸ-ն մասնավորեցման օրվանից չի գործել:

➤ 2018-2020թթ ընթացքում անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված տարածքների գործընթացում արձանագրվել են ներդրումային պարտավորությունների մասնակի կատարման թվով երկու դեպք. ՍՊԸ-ի կողմից նախատեսված 500 աշխատատեղի փոխարեն ստեղծվել է 26-ը, իսկ մեկ այլ դեպքում՝ չի կատարվել պայմանագրով սահմանված 118,346.24 հազ.դրամի ներդրում:

Ծախսային արդյունավետության սկզբունքի չպահպանման օրինակ

- Տարբեր գործարքներով (օտարման, վարձակալության, անհատույց օգտագործման իրավունքով հանձնման) պետական բյուջեի եկամուտները չեն ավելացել մոտ 419,234.52 հազ. դրամով:
- Թվով երկու ընկերության մասով /«Հայփոստ» ՓԲԸ, «Օպերա-Քլար» ՍՊԸ,/ վարձավճարի վերահաշվարկ չի իրականացվել, որի արդյունքում ՀՀ պետական բյուջե չի մուտքագրվել 214,645.00 հազ.դրամ գումար:

6. Էկոնոմիկայի նախարարության կողմից անասնաբուժության մեջ կիրառվող պատվաստանյութերի ձեռքբերման նկատմամբ համապատասխանության հաշվեքննությանը արձանագրվել է.

Անհամապատասխանության օրինակ

- Ծաղիկ պատվաստանյութի գնման ընթացակարգի շրջանակներում կնքված պայմանագրի մասով պատվաստանյութերի ձեռքբերման գինը 54,282.75 հազ. դրամով գերազանցել է գնման հայտով սահմանված ֆինանսական միջոցները: Չնայած ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի ա/ և է/ պարբերություններով սահմանված դրույթների՝ մրցույթը կայացել է, մինչդեռ, նշված ներմուծման գործարքի համար ԱԱՀ-ից ազատման արտոնություն կիրառելի չէր:

Խեղաթյուրման օրինակ

- Բանկային երաշխիքների ստացման հետ կապված հսկողական գործընթացների թերացումները հանգեցրել են խեղաթյուրման 267,000.00 հազ. դրամ գումարի չափով, ուստի ՀՀ պետական բյուջե չեն մուտքագրվել բանկային երաշխիքներով նախատեսված ֆինանսական միջոցները:

7. Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ դպրոցների սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման վարկային և դրամաշնորհային ծրագրերի նկատմամբ համապատասխանության հաշվեքննությանը արձանագրվել է.

Անհամապատասխանության օրինակ

- 118,870.64 հազ. դրամի շինարարական աշխատանքներ կատարվել են պայմանագրի և նախագծի պահանջների շեղումներով:
- Կատարողական հաշվետվություններում հաշվարկված շինարարական աշխատանքների ծավալները գերազանցում են տեղում փաստացի կատարված աշխատանքների ծավալները ընդհանուր գումարով 35,733.88 հազ. դրամի չափով:
- Բոլոր օբյեկտների նախագծերը փորձաքննության են ներկայացվել առանց նախահաշվային փաստաթղթերի: Մինչդեռ, համաձայն ՀՀ կառավարության 19.03.2015թ-ի «ՀՀ-ում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու

և «Կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 596-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ-ում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգ»-ի Հավելված 2-ի 23-րդ կետի՝ պետական և համայնքի բյուջեների (ներառյալ՝ վարկային և դրամաշնորհային միջոցները) հաշվին կամ դրանց ներգրավմամբ իրականացվող ճարտարապետաշինարարական օբյեկտների նախագծերը փորձաքննության են ներկայացվում նախահաշվային փաստաթղթերի ներառմամբ:

➤ Նախագծման և հեղինակային հսկողության թվով 21 պայմանագրերով աշխատանքները սահմանված ժամկետում չեն կատարվել, որոնցից թվով 12 պայմանագրերով ժամկետները ավարտվել են և չեն երկարացվել, սակայն լուծվել է միայն մեկ պայմանագիրը, որի կատարման ժամկետը դեռ ավարտված չի եղել:

➤ Նախագծման և հեղինակային հսկողության ավարտված թվով 4 նախագծերով փաստացի աշխատող չհանդիսացող փորձագետների համար ավելի է վճարվել 33,695.30 հազ. դրամ, իսկ չավարտված թվով 22 նախագծերով՝ փաստացի աշխատող չհանդիսացող փորձագետների համար նախատեսված 113,237.00 հազ. դրամ ծախսը ենթակա է հանման:

➤ Նախագծերի փորձաքննության համար պայմանագրեր է կնքվել համապատասխան լիցենզիա ունեցող ընկերության հետ: Եվս 7 ֆիզիկական անձանց հետ կնքվել է ծառայությունների մատուցման պայմանագրեր 37,284.30 հազ. դրամ ընդհանուր գումարով, որոնցով, ըստ էության, նորից պատվիրվել է իրականացնել փորձաքննություն, ընդ որում, նշված անձինք չեն ունեցել համապատասխան լիցենզիա:

➤ Նախագծերի փորձաքննության թվով 2 պայմանագրերով առկա է շահերի բախում, քանի որ խորհրդատուները չպետք է ուղղակի կամ անուղղակի ներգրավված լինեն որևէ բիզնեսի կամ մասնագիտական գործունեության մեջ, որը հակասում է կամ կարող է հակասել պայմանագրերով իրենց հանձնարարված գործունեությանը: Խորհրդատուներն աշխատելով հիմնադրամում՝ նախագծման պայմանագրերը կնքելուց հետո աշխատանքի են ընդունվել նախագծողի մոտ:

ՄԱՍ 3. ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԻԴԻՏԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննիչ պալատն իր գործունեությունը կազմակերպում է հերթական և արտահերթ նիստերի միջոցով: Հաշվետու ժամանակահատվածում Հաշվեքննիչ պալատն անցկացրել է 23 նիստ, որոնցից 11-ն՝ արտահերթ: Հաշվեքննիչ պալատի բոլոր նիստերի օրակարգերն օրենքով սահմանված կարգով նիստից երկու օր առաջ ուղարկվել են Ազգային ժողով և Կառավարություն: Նույն ժամանակահատվածում Հաշվեքննիչ պալատի կողմից ընդունվել է 333 որոշում, որոնց գերակշիռ մասը՝ 301-ն, առնչվում է հաշվեքննության գործընթացին, 5-ը՝ Հաշվեքննիչ պալատի գործունեության մեթոդական և իրավական ապահովմանը, 6-ը՝ անձնակազմի կառավարման հարցերին, 21-ը՝ ֆինանսատնտեսական գործունեությանը:

Հաշվեքննիչ պալատի նիստերում կայացված որոշումները (բացառությամբ անհատական իրավական ակտերի, հաշվեքննության և ստուգման առաջադրանքների) երեք աշխատանքային օրվա ընթացքում հրապարակվել են Հաշվեքննիչ պալատի www.armsai.am պաշտոնական կայքում:

Կայքում հրապարակված բովանդակությունը համառոտ ներկայացված է ստորև.

2021թ. պաշտոնական կայքում հրապարակված նյութերի վերաբերյալ	
Բովանդակություն	Հրապարակումների թիվ
Հաշվեքննիչ պալատի որոշումներ	130
Հաշվեքննիչ պալատի նիստերի վերաբերյալ տեղեկատվության հրապարակում	21
Միջազգային հարթակներ և համագործակցություն	10
Թափուր աշխատատեղերի և փորձագետների ներգրավման հայտարարություններ	7
Այլ տեղեկատվություն	7

Հաշվետու ժամանակահատվածում զանգվածային լրատվամիջոցները լուսաբանել են Հաշվեքննիչ պալատի մամուլի հաղորդագրությունները և հաշվեքննության արդյունքները: Հաշվեքննիչ պալատը էլեկտրոնային լրատվամիջոցների կողմից հիշատակվել է ավելի քան 2,793 անգամ³:

Հաշվետու ժամանակահատվածում Հաշվեքննիչ պալատում հաստիքների առավելագույն քանակը 155-ն էր, որից 6 հաստիք՝ թափուր: Հաշվեքննիչ պալատի

³ Աղբյուրը՝ Rumorsmonitoring.com

մարդկային ռեսուրսների վերաբերյալ որոշ տվյալներ ներկայացված են ստորև բերված աղյուսակներում.

Աշխատակիցների տարիքային խմբերը

Աշխատակիցների տարիքային խմբեր	Քանակ	Տոկոս
30-ից երիտասարդ	9	6%
30-40 տարեկան	40	26.8%
40-50 տարեկան	39	26.2%
50-60 տարեկան	36	24.2%
60-ից մեծ	25	16.8%
15 տարի և ավելի պետական ծառայության աշխատանքային ստաժ ունեցողներ	77	
Միջին տարիք	40	

Սեռային խմբերը

Սեռ	%
Իգական	22
Արական	78

Աշխատակիցների շարժը

Աշխատակիցների ընդհանուր շարժ (ընդամենը)	53
պետական ծառայության հաստիքներում աշխատակիցների շարժ	53
պետական ծառայությունից ազատված	24
պետական ծառայության ընդունված	29
պայմանագրային աշխատակիցների շարժ	0


Աշխատակիցների որակավորման բարձրացման շրջանակը

Վերապատրաստման ծրագրեր	Մասնակիցներ
Պետական ծառայության /քաղաքացիական ծառայության վերապատրաստումներ	5
Կատարողականի հաշվեքննության ստանդարտների հիման վրա աշխատակիցների վերապատրաստում (Շվեդիայի ազգային աուդիտի գրասենյակի աջակցությամբ)	25
Աուդիտորի որակավորման դասընթաց. ֆինանսական հաշվառման հիմունքներ (GIZ-ի աջակցությամբ)	32

2021 թվականին հաշվեքննիչ պալատի պահպանման նպատակով տրամադրվել է շուրջ 1,095.0 մլն դրամ, որը կազմում է ճշտված պլանի 99.85%-ը: Հաշվեքննիչ պալատի պահուստային ֆոնդի գծով նախատեսված 18.2 մլն դրամն օգտագործվել է 100%-ով: Հաշվեքննիչ պալատի կարողությունների զարգացմանը տրամադրվել է 21.7 մլն դրամ՝ կազմելով ճշտված պլանի 99.7%-ը: Սոցիալական փաթեթների ապահովմանը հատկացվել է 9.2 մլն դրամ՝ կազմելով 90.3%:


Համաձայն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի՝ 2021 թվականին Հաշվեքննիչ պալատի 2020 թվականի ֆինանսական հաշվետվությունները ենթարկվել են արտաքին աուդիտի՝ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից մրցութային հիմունքներով ընտրված արտաքին աուդիտորական կազմակերպության կողմից: Համաձայն տրամադրված աուդիտորական կարծիքի՝ Հաշվեքննիչ պալատի ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով պատրաստված են համաձայն ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտների:

Սույն աուդիտորական եզրակացությունը հրապարակված է Հաշվեքննիչ պալատի պաշտոնական կայքում:

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020թ. ֆինանսական հաշվետվության աուդիտորական եզրակացություն	Հղում
	

2021 թվականի ֆինանսական հաշվետվությունները նույն ընթացակարգով 2022 թվականին կենթարկվեն արտաքին աուդիտի, որի ավարտվելուն պես Հաշվեքննիչ պալատը պաշտոնական կայքում կհրապարակի աուդիտի եզրակացությունը:

Հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագրի կազմման համար հիմք հանդիսացող ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանության հիման վրա հաշվետու տարում մշակվել և Հաշվեքննիչ պալատի կողմից հաստատվել է Հաշվեքննիչ պալատի 2022 թվականի գործունեության ծրագիրը, որը հրապարակված է Հաշվեքննիչ պալատի պաշտոնական կայքում:

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2022 թվականի գործունեության ծրագիր	Հղում
	

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Հաշվեքննիչ պալատի 2020-2023 թվականների ռազմավարական զարգացման ծրագրով ամրագրված 4 հիմնական ռազմավարական նպատակներն են.

1. իրավական դաշտի բարելավում,
2. հաշվեքննության ազդեցության բարելավում,
3. մասնագիտական կարողության և հաշվեքննության հմտությունների արդիականացում,
4. հաղորդակցման և համագործակցության ուղիների հզորացում:

Վերնոշյալ նպատակների իրականացման շրջանկաներում նախատեսված է հասնել 13 ենթանպատակների, որոնց իրագործման համար պլանավորված է 2021թ.-ից մինչև 2023թ.-ն իրականացնել թվով 68 միջոցառում:

Հաշվետու ժամանակահատվածում ռազմավարական զարգացման ծրագրի նպատակներում և ենթանպատակներում փոփոխություններ չեն եղել, իսկ 2021 թվականի ընթացքում ամբողջությամբ իրականացվել է թվով 5 միջոցառում, իսկ 6 միջոցառումների զգալի մասնաբաժինը մեկնարկել է (նախատեսվում է ավարտին հասցնել 2022 թվականի ընթացքում):

«Հաշվեքննիչ պալատի 2020-2023 թվականների ռազմավարական զարգացման ծրագիրն ապահովող՝ 2021 թվականի միջոցառումների պլան»-ի համաձայն՝ ՀՀ հաշվեքննիչ պալատն արտաքին գործընկերների՝ միջազգային կազմակերպությունների և բարձրագույն հաշվեքննիչ մարմինների հետ սերտ համագործակցությամբ իրականացրել է հետևյալ միջոցառումները.

1. Հաշվեքննիչ պալատի իրավասությունների շրջանակներում սահմանադրական բարեփոխումների նախագծի մշակում և ուղարկում ՀՀ Ազգային ժողով և ՀՀ կառավարություն:
2. Օրենսդրական փոփոխությունների փաթեթի մշակում և ուղարկում ՀՀ Ազգային ժողով և ՀՀ կառավարություն:
3. Հաշվեքննիչ պալատի էթիկայի կանոնների կատարելագործում՝ համապատասխանեցնելով ISSAI 130 ստանդարտին:
4. Կատարողականի հաշվեքննության միջազգային փորձի հիման վրա 25 աշխատակցի վերապատրաստում:
5. Հաշվեքննիչ պալատի 2022 թվականի գործունեության ծրագրում միջազգային ստանդարտներով իրականացվող կատարողականի հաշվեքննության ծածկույթի ավելացում:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննիչ պալատը միջազգային համագործակցության շրջանակն էլ ավելի է ընդլայնել, չնայած հաշվետու տարում Covid-19 համավարակով պայմանավորված սահմանափակումներին՝ հաճախ օգտագործելով նաև վիրտուալ նիստերի ձևաչափը: Համագործակցությունը հատկապես նշանավորվել է արտաքին

գործընկերների ներգրավմամբ համատեղ նիստի ձևաչափի ստեղծմամբ, նոր արտաքին գործընկերների, ինչպես նաև SS ենթակառուցվածքներին ուղղված դրամաշնորհների ներգրավմամբ և այլն:

Հաշվետու տարում Covid-19 համավարակի հետևանքները մեղմելու նպատակով Հաշվեքննիչ պալատը ստացել է 44,294 ԱՄՆ դոլարի դրամաշնորհ, որից 30,000-ը՝ «Սաուդյան հիմնադրամի կողմից բարձրագույն աուդիտի մարմինների գործունեության խթանում» ծրագրի շրջանակներում, իսկ 14,294-ը՝ Ասիական երկրների բարձրագույն հաշվեքննիչ մարմինների կազմակերպության (ASOSAI) «Կորոնավիրուսի համավարակի հետևանքների մեղմացում» ծրագրի շրջանակներում: Ստացված միջոցներն ուղղվել են Հաշվեքննիչ պալատի նիստերի դահլիճի համար տեսակոնֆերանսների սարքավորումների, ինչպես նաև կառուցվածքային ստորաբաժանումների համար դյուրակիր համակարգիչների և համակարգչային տեխնիկայի ձեռք բերմանը:

Հաշվետու տարում կայացել է Հաշվեքննիչ պալատի ռազմավարական զարգացման ծրագրի իրականացման 2021 թվականի միջոցառումների ծրագրի վերաբերյալ արտաքին գործընկերների համակարգման առցանց հանդիպում, որին մասնակցել են Եվրոպական միության Տնտեսական զարգացման և համագործակցության կազմակերպության համատեղ SIGMA ծրագրի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID), Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ), ԱՄՆ աուդիտի բարձրագույն մարմնի (GAO), Շվեդիայի աուդիտի ազգային գրասենյակի, ՀՀ հաշվեքննիչ պալատի ներկայացուցիչներ և այլ միջազգային փորձագետներ: Հանդիպման ընթացքում ներկայացվել են Հաշվեքննիչ պալատի 2020-2023 թվականների ռազմավարական զարգացման ծրագրի և միջոցառումների պլանի իրականացման մշտադիտարկման արդյունքները:

Հաշվեքննիչ պալատի ռազմավարության իրագործման շրջանակներում պալատի իրավական բարելավման գործընթացին փորձագիտական աջակցություն է տրամադրել SIGMA ծրագիրը, որի օժանդակությամբ մշակվել են Հաշվեքննիչ պալատի իրավական բարեփոխումների սահմանդրական և օրենսդրական փաթեթները, որոնք ներկայացվել են ՀՀ Ազգային ժողով և Կառավարություն:

2021 թվականի հունիսի 8-ին ՀՀ հաշվեքննիչ պալատի և Շվեդիայի ազգային աուդիտի գրասենյակի միջև կնքվել է փոխըմբռնման հուշագիր, որով մեկնարկել է 2021-2023 թվականների երկկողմ համագործակցության ծրագիրը: Ծրագրի շրջանակներում շվեդական կողմը կտրամադրի տեխնիկական աջակցություն՝ բարելավելու ՀՀ հաշվեքննիչ պալատի մասնագիտական և կազմակերպական կարողությունները: Փոխըմբռնման հուշագրի և համագործակցության ծրագրի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում շվեդ գործընկերները «Կատարողականի հաշվեքննություն» թեմայով առցանց մասնագիտական դասընթաց են անցկացրել Հաշվեքննիչ պալատի 25 հաշվեքննողների համար:

Հաշվետու ժամանակահատվածում ԱՄՆ GAO-ն և USAID-ն համատեղ աջակցություն են ցուցաբերել Հաշվեքննիչ պալատի մասնագիտական կարողությունների բարելավմանը: ԱՄՆ գործընկերները հաշվետու տարում ևս օժանդակություն են ցուցաբերել Հաշվեքննիչ պալատի հաշվեքննությունների ազդեցության բարելավման (հատկապես ֆինանսական և համապատասխանության աուդիտների գծով), մասնագիտական կարողությունների զարգացման (հատկապես էթիկայի և մարդկային ռեսուրսների կառավարման գծով), ինչպես նաև հաղորդակցության ուղիների բարելավման միջոցառումների իրականացման ուղղություններով:

Որպես Հաշվեքննիչ պալատի կարողությունների հզորացման կարևոր դերակատար GIZ-ը նույնպես շարունակել է աջակցել Հաշվեքննիչ պալատին հաշվեքննողների որակավորման դասընթացների իրականացմանն օժանդակելու միջոցով: Մասնավորապես, «ֆինանսական հաշվառման հիմունքներ» թեմայով երկու փուլով վերապատրաստվել են թվով 32 աշխատակիցներ:

Ակտիվ համագործակցության դաշտ է ձևավորվել նաև ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (UNDP) գրասենյակի հետ, որի ժամանակակից խորհրդարան (MAP) ծրագրի աջակցությամբ Հաշվեքննիչ պալատին տրամադրվել է փորձագիտական և տեխնիկական աջակցություն:

Հաշվետու ժամանակահատվածում Արաբական Միացյալ Էմիրությունների բարձրագույն հաշվեքննիչ մարմնի ղեկավար, INTOSAI նախկին նախագահ դոկտոր Հարիբ Ալ Ամիմի գլխավորած պատվիրակությունը հյուրընկալվել էր Հաշվեքննիչ պալատում, որի շրջանակներում քննարկվել են համագործակցության հուշագրի ներքո երկկողմ համագործակցության ընդլայնման հնարավորությունները և համատեղ ծրագրեր նախաձեռնելու կողմերի պատրաստակամությունը:

2021 թվականի ընթացքում Հաշվեքննիչ պալատի պատվիրակությունները մասնակցել են մի շարք նստաշրջանների և համագումարների, որոնք համավարակով պայմանավորված, կազմակերպվել են տեսակոնֆերանսների, նորարարական առցանց պլատֆորմների միջոցով, մասնավորապես.

- Չեխիայի Հանրապետության աուդիտի գրասենյակի նախագահի հրավերով Հաշվեքննիչ պալատի նախագահի գլխավորած պատվիրակությունը մասնակցել է Եվրոպայի աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության (EUROSAI) 11-րդ համագումարին:
- Թայլանդի Թագավորության աուդիտի պետական գրասենյակի ղեկավարի հրավերով ՀՀ հաշվեքննիչ պալատի նախագահի գլխավորած պատվիրակությունը մասնակցել է Աուդիտի բարձրագույն մարմինների ասիական կազմակերպության (ASOSAI) 15-րդ համագումարին:
- ՀՀ հաշվեքննիչ պալատի նախագահի գլխավորած պատվիրակությունը մասնակցել է ԱՊՀ անդամ պետությունների բարձրագույն հաշվեքննիչ մարմինների ղեկավարների խորհրդի 19-րդ նստաշրջանին:

- ՀՀ հաշվեքննիչ պալատի նախագահի գլխավորած պատվիրակությունը մասնակցել է Եվրասիական տնտեսական միության (այսուհետև՝ ԵԱՏՄ) անդամ պետությունների բարձրագույն հաշվեքննիչ մարմինների համատեղ կոլեգիայի նիստին:

ԵԱՏՄ ՀԱՄԱՏԵՂ ՀՍԿՈՂԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխման, ԵԱՏՄ անդամ պետությունների բյուջեների փոխանցման վերաբերյալ

Ղեկավարվելով «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 5-րդ հավելվածի արձանագրության 53-րդ կետի դրույթով, համատեղ հսկողության մասին բարձրագույն հաշվեքննիչ մարմինների կողմից հաստատված համաձայնագրով և միասնական ծրագրով՝ ԵԱՏՄ բարձրագույն հավեքննիչ մարմինների կողմից ԵԱՏՄ անդամ պետությունների լիազորված մարմիններում (գանձապետարաններում) վերահսկողություն է իրականացվել 2020 թվականին ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխման, ԵԱՏՄ անդամ պետությունների բյուջեների փոխանցման ճշտության նկատմամբ: 2021 թվականի համատեղ հսկողական միջոցառման պատասխանատուն Ղազախստանի բարձրագույն հաշվեքննիչ մարմին էր:

2021 թվականի համատեղ հսկողական միջոցառումները, համավարակով պայմանավորված, ինչպես և նախորդ տարի, յուրաքանչյուր բարձրագույն հավեքննիչ մարմնի կողմից իրականացվել են իր երկրի գանձապետարանում:

ԵԱՏՄ անդամ պետությունների բարձրագույն հաշվեքննիչ մարմինների կողմից հսկողական միջոցառումների վերաբերյալ կազմված արձանագրությունների արդյունքներով կազմված ամփոփ հաշվետվությունը հաստատվել է ԵԱՏՄ անդամ պետությունների բարձրագույն հաշվեքննիչ մարմինների համատեղ կոլեգիայի նիստում, որն անցկացվել է տեսակոնֆերանսի միջոցով 2022 թվականի փետրվարի 25-ին:

ԵԱՏՄ (Եվրասիական տնտեսական հանձնաժողով և Եվրասիական միության դատարան) համատեղ արտաքին աուդիտ իրականացնելու մասին

Ղեկավարվելով «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 22-րդ հոդվածով, Եվրասիական տնտեսական Բարձրագույն խորհրդի 2015 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 33 որոշմամբ հաստատված ԵԱՏՄ մարմիններում արտաքին աուդիտ իրականացնելու մասին Հիմնադրույթով՝ ԵԱՏՄ անդամ պետությունների բարձրագույն հաշվեքննիչ մարմինները Միության բյուջեի միջոցների ձևավորման, կառավարման ու տնօրինման, Միության գույքի և այլ ակտիվների արդյունավետ օգտագործման նկատմամբ ԵԱՏՄ մարմիններում՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովում և

Եվրասիական տնտեսական միության դատարանում, 2021 թվականին իրականացրել են համատեղ արտաքին աուդիտ:

2021 թվականի համատեղ հսկողական միջոցառումների պատասխանատու մարմինը ՀՀ հաշվեքննիչ պալատն էր:

Համատեղ հսկողական միջոցառումների ընթացքում Եվրասիական տնտեսական հանձնաժողովում և ԵԱՏՄ դատարանում Եվրասիական տնտեսական միության 2019 և 2020 թվականների բյուջեների կատարման հետագա աուդիտի, 2020 և 2021 թվականների առաջին կիսամյակներում ընթացիկ աուդիտի, 2021 և 2022 թվականների ԵԱՏՄ բյուջեների ձևավորման նախնական աուդիտի իրականացման արդյունքներով կազմվել են հաշվետվություններ:

ՍԵՎԾՈՎՅԱՆ ԱՎԱԶԱՆԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Հայաստանի, Ուկրաինայի, Մոլդովայի, Վրաստանի, Բուլղարիայի, Հունաստանի, Թուրքիայի բարձրագույն հաշվեքննիչ մարմիններն իրենց երկրներում Սևծովյան ավազանի երկրների անդրսահմանային համագործակցության ծրագրի շրջանակներում յուրաքանչյուրն իր երկրում ամենամյա հատուկ աուդիտներ է անցկացնում: Հաշվետու տարվա ընթացքում Հաշվեքննիչ պալատն, ակտիվ համագործակցելով միջազգային գործընկերների հետ, հաջողությամբ ավարտել է հսկողության գծով համակարգողի և ծրագրի ազգային մարմնի մոտ նախատեսված աուդիտները, որոնց արդյունքները ներառվել են Եվրոպական հանձնաժողովին ներկայացված աուդիտորական միասնական հաշվետվությունում (միասնական հաշվետվության պատասխանատուն է Ռումինիայի բարձրագույն հաշվեքննիչ մարմինը): Աուդիտորական առաջադրանքը ներառել է նաև նախորդ տարիներին ներկայացված առաջարկությունների կատարման ընթացքի վերաբերյալ հետհսկողության իրականացումը: Աուդիտորական աշխատանքների իրականացումը կրում է շարունակական բնույթ:

Հաշվեքննիչ պալատի 2021թ. գործունեության տարեկան ծրագրից 2022թ. գործունեության տարեկան ծրագիր տեղափոխված հաշվեքննությունների ցանկ

1. ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն. անտառօգտագործման գործընթաց
2. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն. ճանապարհային ցանցի բարելավման դրամաշնորհային և վարկային ծրագրեր
3. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն. պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում
4. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն. Գյումրու քաղաքային ճանապարհների վարկային և դրամաշնորհային ծրագիր
5. ՀՀ առողջապահության նախարարության ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության ծառայություններ
6. ՀՀ առողջապահության նախարարություն. սոցիալապես անապահով և առանձին խմբերի անձանց բժշկական օգնություն
7. ՀՀ առողջապահության նախարարություն. ոչ վարակիչ հիվանդությունների բժշկական օգնության ապահովում
8. ՀՀ առողջապահության նախարարություն. մոր և մանկան առողջության պահպանում
9. ՀՀ պետական եկամուտների կոմիտե. պետական բյուջեի մուտքերի ձևավորման կանոնակարգված գործունեություն
10. ՀՀ պետական եկամուտների կոմիտե. նոր կորոնավիրուսային համավարակով (COVID-19) պայմանավորված բյուջետային ծախսերի իրականացում
11. ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն. սպառազինության և ռազմական տեխնիկայի ձեռքբերում (ՍՌՏ), ինչպես նաև դրանց առանձին հանգույցների և սարքավորումների ձեռքբերման, արդիականացման, վերականգնման, նոր նմուշների մշակմանն և արտադրությանն ուղղված գործունեություն

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Համագործակցությունը ՀՀ գլխավոր դատախազության հետ⁴

Հ/Հ	Թեմա	Երբ է տրամադրվել	Հաշվեքննություն (վերահսկողությունը) ընդգրկող ժամանակաշրջանը	Ծանոթություն
I. Հաշվեքննիչ պալատը տրամադրել է ՀՀ գլխավոր դատախազությանը				
1	ՀՀ աշխատանքների և սոցիալական հարցերի նախարարություն («Վարդենիսի նյարդահոգեբանական տուն- ինտերնատ» ՊՈԱԿ)	30.03.2021թ.	01.01.2019-31.12.2019թթ.	05.07.2021թ. հարուցվել է քրեական գործ, գտնվում է նախաքննության փուլում: Պետությանը պատճառված վնասի չափը կազմում է 4,456.19 հազ. դրամ:
2	ՀՀ աշխատանքների և սոցիալական հարցերի նախարարություն («Վարդենիսի նյարդահոգեբանական տուն- ինտերնատ» ՊՈԱԿ)	30.03.2021թ.	01.01.2019-31.12.2019թթ.	28.07.2021թ. հարուցվել է քրեական գործ, գտնվում է նախաքննության փուլում: Պետությանը պատճառված վնասի չափը կազմում է 4,800.00 հազ. դրամ:
3	ՀՀ աշխատանքների և սոցիալական հարցերի նախարարություն	10.09.2021թ.	01.01.2020-31.12.2020թթ.	09.11.2021թ. հարուցվել է քրեական գործ, գտնվում է նախաքննության փուլում:

⁴ Աղյուսակի տեղեկատվությունը չի ներառում պետական գաղտնիք պարունակող հաշվեքննությունների վերաբերյալ տվյալներ

4	ՀՀ աշխատանքների և սոցիալական հարցերի նախարարություն («Երևանի Մ. Իզմիրյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ)	30.03.2021թ.	01.01.2019-31.12.2019թթ.	25.09.2021 թվականին հարուցվել է քրեական գործ, գտնվում է նախաքննության փուլում: Պետությանը պատճառված վնասի չափը կազմում է 1,389.0 հազ. դրամ:
5	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն («Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ)	30.07.2021թ.	01.01.2020-31.12.2020թթ.	Ուսումնասիրության փուլում է
6	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն (անասնաբուժության մեջ կիրառվող պատվաստանյութերի ձեռքբերում)	13.10.2021թ.	01.01.2020-31.12.2020թթ.	Ուսումնասիրության փուլում է
7	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն	11.11.2021թ.	01.01.2021-30.09.2021թթ.	Ուսումնասիրության փուլում է
8	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտե	25.02.2022թ.	01.01.2018-31.12.2020թթ.	Ուսումնասիրության փուլում է

II. Հաշվեքննիչ պալատը տրամադրել է ՀՀ գլխավոր դատախազության պահանջով				
1	Դեղատնային գործունեության լիցենզավորման գործընթաց	22.01.2020թ.	01.01.2017- 30.09.2018թթ.	20.02.2021թ. հարուցվել է քրեական գործ, գտնվում է նախաքննության փուլում:
2	ՀՀ առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ	14.06.2019թ.	01.01.2017- 30.09.2018թթ.	22.04.2021թ. հարուցվել է քրեական գործ, գտնվում է նախաքննության փուլում: Պետությանը պատճառված վնասի չափը կազմում է 110,555.6 հազ. դրամ:
3	ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ուղղման նախատեսված միջոցառումների իրականացման պետական աջակցության դրամաշնորհային ծրագիր	12.12.2019թ.	01.01.2017- 31.12.2017թթ.	01.10.2021թ. հարուցվել է քրեական գործ, գտնվում է նախաքննության փուլում: Պետությանը պատճառված վնասի չափը կազմում է 117,147.0 հազ. դրամ:
4	ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն	2021թ.	01.01.2018- 30.06.2019թթ.	17.03.2022թ. հարուցվել է քրեական գործ, գտնվում է նախաքննության փուլում: Պետությանը պատճառված վնասի չափը կազմում է 153,861.0 հազ. դրամ:

2021 թվականի գործունեության ծրագրի 2-րդ մասով իրականացված հաշվեքննությունների ընթացիկ եզրակացությունների ամփոփագրեր

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ.
ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Հաշվեքննության օբյեկտը		
Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն		
Հաշվեքննության կատարման ժամկետը		Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը
2021 թվականի մայիսի 19-ից 2021 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ		2020 թվականի հունվարի 1-ից 2020 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ
Հաշվեքննության առարկան		Հաշվեքննության մեթոդաբանությունը
Ժողովրդագրական վիճակի բարելավման ծրագիր		Կատարողականի հաշվեքննություն
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ
1	1	1
Համառոտ եզրակացություն		
Չի պահպանվել նպատակային արդյունավետության սկզբունքը:		

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՊՈԱԿ-ՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննության օբյեկտը	
Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	
Հաշվեքննության կատարման ժամկետը	Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը
2021 թվականի մայիսի 19-ից 2021 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ	2020թ. հունվարի 1-ից 2020թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ
Հաշվեքննության առարկան	Հաշվեքննության մեթոդաբանությունը
Համակարգում գործող «Ձորակ» հոգեկան	Կատարողականի հաշվեքննություն

առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն, «Երևանի մանկան տուն», «Գյումրու երեխաների տուն» և «Երևանի «Զատիկ» աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ների ֆինանսատնտեսական գործունեություն		
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ
11	1	7
Համառոտ եզրակացություն		
<ul style="list-style-type: none"> • Չեն պահպանվել տնտեսման և ծախսային արդյունավետության սկզբունքները: • Հաշվեքննության արդյունքներն ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազություն: 		

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ. ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐԻ ՑԱՆԿԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ, ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒՄ, ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Հաշվեքննության օբյեկտը		
Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայություն		
Հաշվեքննության կատարման ժամկետը	Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	
2020թ. դեկտեմբերի 14-ից մինչև 2022թ. փետրվարի 28-ը ներառյալ	2019թ. հունվարի 1-ից մինչև 2019թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ	
Հաշվեքննության առարկան	Հաշվեքննության մեթոդաբանությունը	
Կենսաթոշակառուների ցանկերի ձևավորում, կենսաթոշակների նշանակում, կենսաթոշակների վճարման իրականացում	Կատարողականի հաշվեքննություն	
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ
2	-	1
Համառոտ եզրակացություն		
Չեն պահպանվել տնտեսման, ինչպես նաև ծախսային և նպատակային արդյունավետության սկզբունքները:		

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԱՄԱՎԱՐԱԿՈՎ (COVID-19) ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Հաշվեքննության օբյեկտը		
Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն		
Հաշվեքննության կատարման ժամկետը		Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը
2021 թվականի փետրվարի 10-ից 2021 թվականի դեկտեմբերի 30-ը ներառյալ		2020 թվականի հունվարի 1-ից 2020 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ
Հաշվեքննության առարկան		Հաշվեքննության մեթոդաբանությունը
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում նոր կորոնավիրուսային համավարակով (COVID) պայմանավորված բյուջետային ծախսերի իրականացում		Կատարողականի հաշվեքննություն
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ
1	-	3
Համառոտ եզրակացություն		
Չեն պահպանվել տնտեսման և ծախսային արդյունավետության սկզբունքները:		

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԱՄԱՎԱՐԱԿՈՎ (COVID-19) ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Հաշվեքննության օբյեկտը	
Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայություն	
Հաշվեքննության կատարման ժամկետը	Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը
2021թ. հունիսի 1-ից մինչև 2022թ. փետրվարի 28-ը ներառյալ	2020թ. հունվարի 1-ից մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ
Հաշվեքննության առարկան	Հաշվեքննության մեթոդաբանությունը

Նոր կորոնավիրուսային համավարակով (COVID-19) պայմանավորված բյուջետային ծախսերի իրականացում		Կատարողականի հաշվեքննություն
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ
-	1	2
Համառոտ եզրակացություն		
Չի պահպանվել նպատակային արդյունավետության սկզբունքը:		

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԱՄԱՎԱՐԱԿՈՎ (COVID-19) ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Հաշվեքննության օբյեկտը		
Առողջապահության նախարարություն		
Հաշվեքննության կատարման ժամկետը	Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	
2021թ. փետրվարի 10-ից մինչև 2022թ. մարտի 31-ը ներառյալ	2020թ. հունվարի 1-ից մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ	
Հաշվեքննության առարկան	Հաշվեքննության մեթոդաբանությունը	
Նոր կորոնավիրուսային համավարակով (Covid-19) պայմանավորված բյուջետային ծախսերի իրականացում	Կատարողականի հաշվեքննություն	
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ
4	3	2
Համառոտ եզրակացություն		
Չի պահպանվել ծախսային և նպատակային արդյունավետության սկզբունքները:		

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԱՄԱՎԱՐԱԿՈՎ (COVID-19) ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Հաշվեքննության օբյեկտը

Էկոնոմիկայի նախարարություն		
Հաշվեքննության կատարման ժամկետը		Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը
2021թ. փետրվարի 10-ից մինչև 2022թ. փետրվարի 28-ը		2020թ. հունվարի 1-ից մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ը
Հաշվեքննության առարկան		Հաշվեքննության մեթոդաբանությունը
Նոր կորոնավիրուսային համավարակով (COVID-19) պայմանավորված բյուջետային ծախսերի իրականացում		Կատարողականի հաշվեքննություն
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ
4	1	3
Համառոտ եզրակացություն		
Արձանագրվել են տնտեսման, ինչպես նաև ծախսային և նպատակային արդյունավետության սկզբունքների չպահպանման դեպքեր:		

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՆԱՍՆԱՐՈՒԺՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԿԻՐԱՌՎՈՂ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ

Հաշվեքննության օբյեկտը	
Էկոնոմիկայի նախարարություն	
Հաշվեքննության կատարման ժամկետը	Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը
2021 թվականի հունիսի 3-ից մինչև 2021 թվականի նոյեմբերի 30-ը	2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը
Հաշվեքննության առարկան	Հաշվեքննության մեթոդաբանությունը
Անասնաբուժության մեջ կիրառվող պատվաստանյութերի ձեռքբերում	Համապատասխանության հաշվեքննություն
Հաշվեքննության կարծիք	
<ul style="list-style-type: none"> Հաշվեքննությամբ տրվել է «բացասական» կարծիք: Հաշվեքննության արդյունքներն ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազություն: 	

**ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ. ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ
ՀԱՇՎԱՌՄԱՆ ՍՏԱՆԴԱՐՏԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ**

Հաշվեքննության օբյեկտը		
Ֆինանսների նախարարություն		
Հաշվեքննության կատարման ժամկետը		Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը
2021 թվականի հունիսի 21-ից մինչև 2022 թվականի փետրվարի 28-ը		2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2021 թվականի հունիսի 1-ը
Հաշվեքննության առարկան		Հաշվեքննության մեթոդաբանությունը
Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտի (ՀՀՀՍ) ներդրման գործընթաց		կատարողականի հաշվեքննություն
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ
1	1	-
Համառոտ եզրակացություն		
Չի պահպանվել նպատակային արդյունավետության սկզբունքը:		

**ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԳՈՐԾԸՆԹԱՑ**

Հաշվեքննության օբյեկտը	
Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտե	
Հաշվեքննության կատարման ժամկետը	Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը
2020թ. սեպտեմբերի 22-ից մինչև 2022թ. փետրվարի 28-ը ներառյալ:	2018թ. հունվարի 1-ից մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ:
Հաշվեքննության առարկան	Հաշվեքննության մեթոդաբանությունը
Պետական գույքի կառավարման հետ կապված հարաբերությունների իրականացման կազմակերպված	Կատարողականի հաշվեքննություն

գործընթաց		
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ
3	4	2
Համառոտ եզրակացություն		
<ul style="list-style-type: none"> • Չեն պահպանվել ծախսային և նպատակային արդյունավետության սկզբունքները: • 2018-2020թթ.-ի ընթացքում օտարված անշարժ գույքի վերավաճառքի վերաբերյալ հաշվեքննությամբ արձանագրված փաստերը ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազություն: 		

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ. ԴՊՐՈՑՆԵՐԻ ՍԵՅՄՄԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՅՄԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

Հաշվեքննության օբյեկտը		
Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն		
Հաշվեքննության կատարման ժամկետը		Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը
2020թ. հունիսի 8-ից մինչև 2021թ. դեկտեմբերի 30-ը		2017թ. հունվարի 1-ից մինչև 2019թ. դեկտեմբերի 31-ը
Հաշվեքննության առարկան		Հաշվեքննության մեթոդաբանությունը
Դպրոցների սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման վարկային և դրամաշնորհային ծրագրեր		Համապատասխանության հաշվեքննություն
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ
9	-	-
Հաշվեքննության կարծիք		
Հաշվեքննությամբ տրվել է «ոչ լիարժեք եզրահանգում» կարծիք:		

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ. ՆԱԽՆԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ), ՄԻՋԻՆ, ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

Հաշվեքննության օբյեկտը
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Հաշվեքննության կատարման ժամկետը		Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	
2020թ. սեպտեմբերի 22-ից 2021թ. հոկտեմբերի 29-ը		2019թ. հունվարի 1-ից 2019թ. դեկտեմբերի 31-ը	
Հաշվեքննության առարկան		Հաշվեքննության մեթոդաբանությունը	
Նախնական, միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթությունների գծով ուսանողական նպաստների տրամադրում		Կատարողականի հաշվեքննություն	
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ	
1	3	2	
Համառոտ եզրակացություն			
Չեն պահպանվել տնտեսման և ծախսային և նպատակային արդյունավետության սկզբունքները:			

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԱՐՎԵՍՏՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ»

Հաշվեքննության օբյեկտը		
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն		
Հաշվեքննության կատարման ժամկետը		Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը
2020թ. սեպտեմբերի 22-ից 2021թ. մարտի 31-ը		2019թ. հունվարի 1-ից 2019թ. դեկտեմբերի 31-ը
Հաշվեքննության առարկան		Հաշվեքննության մեթոդաբանությունը
Արվեստների ծրագիր		Կատարողականի հաշվեքննություն
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ
2	3	3
Համառոտ եզրակացություն		
Չեն պահպանվել տնտեսման և ծախսային և նպատակային արդյունավետության սկզբունքները:		

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՅ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԻՐԱԿԱՆԱՅՈՒՄ

Հաշվեքննության օբյեկտը

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով		
Հաշվեքննության կատարման ժամկետը		Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը
2021 թվականի հունիսի 22-ից մինչև 2022 թվականի փետրվարի 28-ը ներառյալ		2019 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը
Հաշվեքննության առարկան		Հաշվեքննության մեթոդաբանությունը
Հանրային ծառայությունների ոլորտի կարգավորման գործընթաց		Համապատասխանության և կատարողականի հաշվեքննություն
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ
3	4	8
Համառոտ եզրակացություն և հաշվեքննության կարծիք		
<ul style="list-style-type: none"> Չեն պահպանվել ծախսային և նպատակային արդյունավետության սկզբունքները: Համապատասխանության հաշվեքննությամբ տրվել է «ոչ լիարժեք եզրահանգում» կարծիք: 		

ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննության օբյեկտը		
Պետական եկամուտների կոմիտե		
Հաշվեքննության կատարման ժամկետը		Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը
25.05.2020-30.12.2021թ.թ.		01.01.2019-31.12.2019թ.թ.
Հաշվեքննության առարկան		Հաշվեքննության մեթոդաբանությունը
Ֆինանսատնտեսական գործունեություն		Ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ
2	-	5
Հաշվեքննության կարծիք		

- Ֆինանսական հաշվեքննությամբ տրամադրվել է «դրական» կարծիք:
- Համապատասխանության հաշվեքննությամբ տրվել է «ոչ լիարժեք եզրահանգում» կարծիք:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԵՐԵԼԱԿՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ

Հաշվեքննության օբյեկտը		
Երևանի քաղաքապետարան		
Հաշվեքննության կատարման ժամկետը		Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը
2021 թվականի մայիսի 31-ից մինչև 2022 թվականի մարտի 31-ը		2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը
Հաշվեքննության առարկան		Հաշվեքննության մեթոդաբանությունը
Վերելակների հիմնանորոգում		Ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ
2	-	1
Հաշվեքննության կարծիք		
Հաշվեքննությամբ տրվել է «դրական եզրահանգում» կարծիք:		

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆ» ՓԲԸ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննության օբյեկտը	
Երևանի քաղաքապետարան	
Հաշվեքննության կատարման ժամկետը	Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը
2021 թվականի մայիսի 31-ից մինչև 2022 թվականի փետրվարի 28-ը	2019 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը
Հաշվեքննության առարկան	Հաշվեքննության մեթոդաբանությունը

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի ֆինանսատնտեսական գործունեություն		ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ
1	1	4
Հաշվեքննության կարծիք		
Հաշվեքննությամբ տրվել է «ոչ լիարժեք եզրահանգում» կարծիք:		